

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ
ԺԱՄԸ 17:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

- | | |
|----------------|---|
| Գ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ |
| Կ. Մինասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Ն. Երիցյան | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ |
| Վ. Նիկոյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Ա. Սարգսյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն |
| Ն. Մարտիրոսյան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար |

Հրավիրվածներ՝

- | | |
|---------------|--|
| Վ. Գաբրիելյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար |
| Մ. Մելքումյան | ՀՀ ԱԺ-ի պատգամավոր |
| Վ. Տերտերյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ |

- Լ. Հունանյան << ֆինանսների նախարարի տեղակալ
- Հ. Բերբերյան << վարչապետի մամուլի քարտուղար
- Վ. Կտիկյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
- Վ. Նիկոյան << վարչապետի օգնական
- Ռ. Վարդանյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
- Ա. Հարությունյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Է. Ավետյան << ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
- Ք. Ղալեջյան «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան

1. Կառավարման խորհրդի նախորդ հանձնարարականների կատարման մասին

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանի զեկուցումը:

2. Տրանշ 1-ի և 2-ի շինարարական աշխատանքներին խոչընդոտող գովազդային վահանակների ապամոնտաժման և փոխհատուցման վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել << վարչապետի վերահսկողական ծառայության պետ Ս. Գրիգորյանին և << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Բաջատրյանին՝ յուրաքանչյուրն իր մասով կատարել ուսումնասիրություններ՝ Գովազդային վահանակների միջոցով գովազդային

ծառայություն մատուցող համապատասխան 4 ընկերությունների հարկային ու պայմանագրային այլ պարտավորությունների կատարման գծով և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

3. ՀՀ Արարատի մարզի համայնքերի համար՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Երևան-Արտաշատ հատվածում գյուղատնտեսական տեխնիկայի և ընտանի կենդանիների համար նոր ուղեանցերի կառուցման վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանի հետ քննարկել ստորգետնյա ուղեանցի կառուցման հնարավորության հարցը և արդյունքը ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

2) բանակցել Մարմարաշեն և Բուրաստան համայնքների ղեկավարների հետ՝ նոր վերգետնյա ուղեանցերի կառուցման փոխարեն արոտավայրերին հարող տարածքներում նոր գոմերի կառուցման հնարավորության հարցի շուրջ.

3) բանակցության արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

4. Տրանշ 3-ի շինարարական վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և մոտ 60 կմ-ի մանրամասն նախագծման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը հաստատելու վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն, որ Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և մոտ 60 կմ-ի մանրամասն նախագծման աշխատանքներում կնախատեսվի կառուցել մինչև 1-ին կարգի ճանապարհի կառուցում, իսկ հետագայում, գնային համեմատության արդյունքում կկայացվի համապատասխան որոշում:

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ հարավային հատվածում կառուցվող ճանապարհահատվածի նախագիծը համադրել երկաթգծի կառուցման ներդրումային ծրագրի հետ և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

3) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկների հիման վրա լրամշակել Տրանշ 3-ի շինարարական վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և մոտ 60 կմ-ի մանրամասն նախագծման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը:

4) հաստատել Տրանշ 3-ի շինարարական վերահսկողության և Տրանշ 4-ի տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախնական նախագծման և մոտ 60 կմ-ի մանրամասն նախագծման համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքի վերջնական լրամշակված տարբերակը:

5. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-3 Թալին-Գյումրի (Թալին-Լանջիկ, Լանջիկ-Գյումրի) ճանապարհահատվածի մանրամասն նախագծի հատուկ համալիր փորձաքննություն անկացնելու վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) առաջարկել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանին «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին ներկայացնել տեղական մասնագետների թեկնածություններ՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-3 Թալին-Գյումրի (Թալին-Լանջիկ, Լանջիկ-Գյումրի) ճանապարհահատվածի մանրամասն նախագծի հատուկ համալիր փորձաքննության հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար:

2) հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-3 Թալին-Գյումրի (Թալին-Լանջիկ, Լանջիկ-Գյումրի) ճանապարհա-

հատվածի մանրամասն նախագծի հատուկ համալիր փորձաքննության անցկացման առաջարկին:

6. «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի» կառավարման խորհրդի 23.07.2013 թ. նիստի N23.6/[164432]-13 արձանագրության 3-րդ հարցի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով տրված հանձնարարականների կատարման, ինչպես նաև «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի 2013 թվականի պահպանման ծախսերի փոփոխությունները հաստատելու վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Դ. Սարգսյանի և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վ. Գաբրիելյանի հետ ևս մեկ անգամ քննարկել նոր հաստիքների ավելացման, ինչպես նաև աշխատավարձերի սանդղակների սահմանման հարցերը:

7. «ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի շրջանակներում ծրագրի ներկայացուցիչներից կազմված մասնագիտական խմբի Վրաստան այցելության արդյունքների վերաբերյալ

(Ա. Սարգսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանի՝ «ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի շրջանակներում ծրագրի ներկայացուցիչներից կազմված մասնագիտական խմբի Վրաստան այցելության արդյունքների մասին զեկուցումը.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա. Սարգսյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությամբ կառավարման խորհրդի հաջորդ նիստում առավել մանրամասն ներկայացնել «ՀՀ

պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի շրջանակներում ծրագրի ներկայացուցիչներից կազմված մասնագիտական խմբի Վրաստան այցելության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ